



□□□□□

Հայաստանի գրողների միության անդամ, բանաստեղծ Հայկազ Խնկոյանը ծնվել է 1951թ-ի փետրվարի 5-ին՝ Վրաստանի հանրապետության Ախալքալաքի շրջանի Բուռնաշեթ գյուղում: 1968-ին ավարտել է նույն շրջանի Ազավրեթ գյուղի միջնակարգ դպրոցը: Ծառայել է սովետական բանակում: 1974թ-ին ընդունվել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է հայրենի գյուղում, որպես ակումբի վարիչ: Տարբեր ուսումնական հաստատություններում դասավանդել է հայոց լեզու և գրականություն, աշխատել է ուսմասվար: 1984թ-ից ապրում է Բյուրեղավանում: Հայկազ Խնկոյանը գրել սկսել է մանկուց: Առաջին ստեղծագործությունը՝ «Արև»-ը, գրել է 11 տարեկանում:

Պայծառ երկնքում Եղել են արև,

Որ մարդկանց ես տամ

Մի քաղցր բարև:

Հրատարակել է բանաստեղծությունների չորս գիրք՝ «Նախանշան» 1992թ.-ին, «Արևագալ» 2004թ.-ին, «Միջօրե» 2012թ.-ին, և «Աշնանաձայնը»՝ 2013թ.-ին: Պատրաստում է տպագրության «Կաթնածիր» ժողովածուն: Բանաստեղծի գրքերի վերնագրերը, ամբողջական ակրոստիքոսի ձևով, բացահայտում են օրվա խորհուրդը և նամակ-բանաստեղծություններով արտահայտում հեղինակի ներաշխարհն ու մարդկային ոգու հարատևությունը: Բանաստեղծությունները տպագրվել են մի շարք թերթերում ու ամսագրերում: 2013թ-ից Հայաստանի գրողների միության անդամ է: Բանաստեղծ Հ. Խնկոյանը քննության է ներկայացրել Բյուրեղավանի հիմնի նախագիծը, երաժշտությունը՝ երգահան Մ. Բաղայանի:

Անվանի մարդիկ էջի անդրադարձը.

Byureghavan.am-Ինչպես ստացվեց, որ սկսեցիք գրել, երբ զգացիք, որ կարող էք Ձեր մտքերը թղթին հանձնել:

□.□□□□□□-Ինքնաբերաբար ստացվեց: Օրը հիշում եմ՝ տաք, արևոտ, գարնանային մի օր էր և հանկարծ գրիչը վերցրեցի ու սկսեցի գրել: Գրեցի արևի, բնության, ուսուցիչներիս մասին: Դա եղավ իմ առաջին, գրական թոթովանքը և Աստված կամեցավ, որ այն շարունակվի: Աշխատում եմ իմ գրվածքներում ներդնել մարդկային հույզեր, մարդկային մտածելակերպ, այն ամենն ինչ, ընդհանուր է բոլորի համար:

Byureghavan. am- Ձեր ստեղծագործությունների ուղղվածությունը:

□. □□□□□□-Հիմնականում գրում եմ կենսափիլիսոփայական մոտիվներով, այսինքն կյանքի դրվածքի, սկզբի, վերջնական նպատակի, որի մեջ գտնվում է մարդը՝ ինքն, իր ողջ էությանմբ: Կարևորում եմ հայրենասիրական և սիրո մոտիվները: Մենք ապրում ենք հայրենիքով՝ շնչում ու տառապում: Պետք է լավ իմանանք մեր անցյալը, որի վրա կառուցենք ներկան և աչքներս հառենք դեպի ապագան: Սերը մարդկային վեհ զգացում է: Սեր ոչ միայն հակառակ սեռի նկատմամբ, այլև աշխարհի, որտեղ մարդկային զգացումները և հետաքրքրությունները ուզում ես ի ցույց դնել և գտնել քո աշխարհը:

Byureghavan. am-Գրողի համար կարևոր է ունենալ ընթերցող: Դուք ունեք Ձեր ընթերցողը:

□. □□□□□□- Այո, ես ունեմ իմ ընթերցողը, դժբախտաբար նրանց թիվը մեծ չէ: Ընդհանուր ընթերցողների թիվն է պակասել, սակայն հետաքրքրությունը չի կորել: Կարծում եմ կգա ժամանակ և մարդիկ կհետաքրքրվեն իմ պոեզիայով:

Byureghavan. am-Բացի պոեզիայից, Ձեզ արձակ ժամրում փորձել էք:

□. □□□□□□□- Աստված ի վերուստ տվել է ինձ արտահայտվել պոեզիայի միջոցով: Իմ թռիչքը պոեզիան է:

Byureghavan. am-Գրաքննադատության մասին ինչ վերաբերմունք ունեք:

□. □□□□□□□-Վերաբերմունքս շատ առողջ է: Քննադատությունն այն ուժն է, որ ուղղություն է տալիս գրական գործչին: Իմ բանաստեղծությունները գրաքննադատների ուշադրությանը շատ չեն արժանացել:

Byureghavan. am- Ստեղծագործող մարդն ինչպիսի հատկանիշներով պետք է օժտված լինի:

□. □□□□□□□-Առաջին հերթին նա նախագգացում պետք է ունենա: Գուշակությունն այդքան էլ գովելի երևույթ չէ, սակայն գրողը պետք է կարողանա գուշակել ոչ թե ներկան, այլև ապագան: Լինում են պահեր երբ երկու բառ չեն կարողանում իրար կապել: Սակայն պահեն են լինում, որ ուզում են թողնել ամեն ինչ և մտքերս հանձնել թղթին: Քանի որ մտքերի կրողը ես եմ, ուրեմն պետք է գրեմ:

Byureghavan. am-Բյուրեղավան քաղաքի և բյուրեղավանցիների մասին:

□. □□□□□□□-Շատ ուրախ եմ, որ բնակվում ու ստեղծագործում եմ այս քաղաքում: Քաղաքային իշխանությունները մտահոգ են յուրաքանչյուր խնդրով: Հուսով եմ, որ մշակույթն այս քաղաքում վերելք կապրի և ամեն ոք իր տեղում կլինի:

Byureghavan. am-Ձեր ամանորյա մաղթանքները:

□. □□□□□□□-Բոլորին ցանկանում եմ ինքնահաստատում մտածելակերպի մեջ: Թող որ հասնեն իրենց նպատակին: Ցանկանում եմ Բյուրեղավանում ստեղծվի մշակութային:կոլորիտ, որտեղ կմեծանա մեր սերունդը: Ամեն ինչում` «Տեր եղիր» սկզբունքը թող առաջնորդի բոլորիս: Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

